

ՀԱԿՈՒՔ ՓԱՓԱԶՅԱՆ

ՍՈՖԻԱՅԻ ԿԻՐԻԼ ԵՎ ՄԵՔՈՂԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ
ՎԱՆԻ ԷՅԱԼԵԹԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՕՍՄԱՆՅԱՆ ԴԻՎԱՆԱԿԱՆ
ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ

Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի Արևելյան բաժնի արխիվում պահվող օսմանյան պատմական վավերագրերի աղբյուրագիտական արժեքը բաղմիցս ընդգծված է ուշ միջնադարի սովետական և արտասահմանյան պատմագիտական գրականության մեջ¹։

1982 թ. Բուլղարիա կատարած ուղևորության ընթացքում, անձամբ ծանոթանալով այդ մեծարժեք ժողովածուի հետ, առանձին հողվածով փորձել ենք տալ խնդրո առարկա արխիվի, տարրեր ֆոնդերում խմբավորված բաղմահաղար վավերագրերի ընդհանուր բնութագիրը, առանձնապես կանգ առնելով այն ֆոնդերի վրա, որոնք Հայաստանի և հայ ժողովրդի հատկապես արևմտյան, մասամբ նաև արևելյան հատվածների XVI—XIX դդ. սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմության վերաբերյալ եզակի նշանակություն ունեցող փաստական հարուստ տվյալներ են պարունակում²։

Ինչպես արդեն նշված է, Արևմտյան Հայաստանին վերաբերող վավերագրերը խմբավորված են էրզրումի, Վանի, Կարսի, Չըլդըրի, Թոքաթի, Խարբերդի, Դիարբեքիի և Քրդստանի ֆոնդերում, թեև հայերի մասին զգալի նյութ կան նաև Սերաստիայի, Կեսարիայի, Մալաթիայի, Մարաշի, Ադանայի, Այնթապի, Ամասիայի, Նզեսիայի, Անտիոքի, Իկոնիայի, Հալեպի, Տրապիզոնի, ինչպես նաև Քյոթահիայի, Ղրիմի, Չմյուռնայի, Թեքիրդաղի, Երուսաղեմի և այլ ֆոնդերում գրանցված վավերագրերում։

Առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում էրզրումի և Վանի ֆոնդերը, որոնք ընդգրկում են պատմական Հայաստանի Բարձր Հայքի, Տարոն-Տուրուբերանի, Մոկքի և հատկապես Վասպուրականի տարածքներին վերաբերող և նշված ժամանակահատվածի պատմության հիմնական հարցերի լուսաբանմանը նպաստող բաղմարնույթ վավերագրեր։ Այս երկու ֆոնդերում առկա, ընդհանուր թվով 4683 վավերագրերից Վանի էյալեթին վերաբերող փաստա-

¹ Траянов Велков, Османо турски документи о финансово съдържание XVI—XVIII вв., София, 1977. Եռմալլուրի ԸՈՎՁՄԵՆԹՁՐԻ ՄԿԵՐՈՂԵԻ ԱՆԱԿԼՈՒՍԱ ԸԱ ԵՒՄԻՍ ԸՈՎԵԵԵԻՍ ՅԵՍԱԺԵԵ (XVII—XVIII), ԳԱՄՈՍԱԸԵՄԱԸ ՄՈԱՄԵԱԸ ՆՈԸԱՐ ՅԵՆԵԵԼԼՈԱՄ, ԵԺԼԼԸՍԻ, 1982. ԽԼԸԸԻՐՈՍ, ԵԻԱԼԼԵՒԵՍ ԳՅԱԸ ԸԱՅՏԱՐԻ 1694-1732 Մ. Մ. ԳԱՄՈՍԱԸԵՄԱԸ ՄՈԱՄԵԱԸ ԸՍՏԱՆԱ ԱԺՁԼԱԺԵՄ, ԵԺԼԼԸՍԻ, 1979.

² Զ. Գ. Փափազյան, Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի օսմանյան դիվանական վավերագրերը, ՊԲՀ, 1984, № 3, էջ 195—214:

թղթերը 927 հատ են (1802 թերթ), որոնցից հնագույնը հիշք. 985 (1577) թ. վանի, Արճեշի, Ադիլջավազի (Արծկե), Բիթլիսի (Բաղեշ), Բերկրիի և Քեսունի (Կեղան) լիվանների, միջին շափսի վեց թղթերի վրա, մեծ մասամբ մանր սիակաթ գրությամբ գրված թիմարների դեֆթերն է, որտեղ արձանագրված են այդ լիվաներին ենթակա Դավաշի, Արճեշի, Տատիկի, Օխկանի, Չուկուրի, Ամյուկի, Արգիլի, Մուշի, Ադիլջավազի, Կապանի, Բերկրիի և այլ նահիաներում գտնվող 104 գյուղերի ու ագարակների (կարիյյա և մազրաա) թիմարների, ինչպես նաև հանքերի, ներկատների, գինետների, անասունների և գերեվաճառության շուկաների, կաշվի դարադման արհեստանոցների (դարադխանե) և այլ եկամտաբեր օբյեկտների մուկաթիանների գումարները³:

Նույնպիսի մի դեֆթեր պահպանված է նաև հիշքեթի 1012 (1603) թվականից⁴, որը հիմնականում համապատասխանելով 1577 թ. դեֆթերին, մեծ հետաքրքրություն է ներկայացնում հատկապես Բիթլիսում իշխող Ռոժակի ցեղի առաջնորդների ֆեոդալական տան զիամեթների ու թիմարների մանրամասն նկարագրությամբ: Հայտնի է, որ դեռևս ամիր Շամս-էդ-դինի ժամանակներից (XV դ.) Բիթլիսի, Խլաթի, Մուշի, Խնուսի շրջանները, որպես սոյուրդալներ, Բիթլիսի ամիրների ֆեոդալական տիրույթներն էին⁵, որոնք XVI դարի երկրորդ կեսում (1578 թ.) ժառանգաբար անցան նույն ընտանիքի նշանավոր դեմբերից, մեծ ամիր և անվանի պատմիչ, «Շարաֆնամե» պատմական երկասիրության հեղինակ՝ Շարաֆ-խան Բիթլիսիին⁶: Սույն դեֆթերում գրանցված են Բիթլիսի ամիրների թիմարների սահմաններում գտնվող, ինչպես բուն Բիթլիս քաղաքից, այնպես նաև վերոհիշյալ կազաններին ենթակա Խուլփիկի, Խութի, Դատվանի, Խլաթի, Տատիկի, Դավառի, Կարճկանի, վանի, Մուշի, Ադիլջավազի (Արծկե), Արճակի, Արճեշի և այլ նահիաների հարյուրավոր գյուղերից ստացվող եկամուտները, որոնց ընդհանուր գումարը կազմում է 1415372 աբշև:

Վավերագիրը ուշագրավ մանրամասնություններ է պարունակում նաև Շարաֆ-խանի սպանությունից հետո նրա տիրույթների՝ շատ կարճ ժամանակով եղբորը Խալաֆ-խանին անցնելու, իսկ վերջինիս սպանությունից անմիջապես հետո նույն տիրույթների՝ Շարաֆ-խանի որդի Զիա-էդ-դինին տրվելու վերաբերյալ: Իսկ դեֆթերի առաջին էջի վերի մասում, ավելի ուշ կատարված մակագրությունից պարզվում է նաև, որ հիշք. 1028 (1619) թ. այդ նույն թիմարները տրվել են վախճանված Զիա-էդ-դինի որդուն՝ Շարաֆ-խանին⁷:

³ Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի Արևելյան բաժնի արխիվ, ֆոնդ 223 Ա, վավ. 511 (Այսուհետև՝ ԿՄԺԳԱ):

⁴ ԿՄԺԳԱ, ֆոնդ ՕԱԿ, վավ. 162/36:

⁵ Scheref-nameh ou Histoire des kourdes, par Scheref, prince de Bidlis. Publiée par V. Véliaminof-Zernof, t. I, texte persan, ière partie, St. Pétersbourg, 1860, էջ 376—378 (Այսուհետև՝ Շարաֆնամե):

⁶ Նույն տեղում, էջ 454:

⁷ Ցարդ հայտնի չէ պատմիչ Շարաֆ-խան Բիթլիսիի մահվան թվականը: Վ. Վելյամինով-Զեռնովը հաստատում է, որ նա մինչև 1599 թ. ողջ է եղել (տե՛ս Շարաֆնամե, առաջաբան, էջ 16—17), որից հետո տեղեկություններ չկան, թե մինչև ո՞ր թվականն է ապրել: 1603 թ. կազմված սույն դեֆթերում նկարագրված Բիթլիսի ամիրների հաջորդականությունից երևում է, որ նա սպանված պետք է լինի 1601—1602 թթ., որից հետո զիամեթներին տիրել է նրա եղբայր Խալաֆ-խանը, որն այս ընթացքում սպանվել է իր իսկ աշիրեթի քրդերի ձեռքով, և նորից այդ տիրույթները տրվել են պատմիչի որդիներից Զիա-էդ-դինին, ինչպես երևում է, երկու եղ-

Կան նաև XVIII դարի 30-ական թվականներին վերաբերող Վանի բերդի մուտքի և ելքի, խրթին սիակաթով գրված մանրամասն հաշվեկշիռներ (Դեֆթերի իրադ վե մեսարիֆ-ի խազինա-ի Վան)⁸, որոնք Վանի մերձակա, ինչպես նաև Ռշտունիքի, Շատախի, Գավաշի, Արճակի և այլ շրջանների բազմաթիվ գյուղերից ստացվող հացահատիկի (ցորեն, գարի, բլղուր, ալյուր և այլն), յուղի, մանր եղջերավոր անասունների (արու և էգ ոչխար, գառ, այծ և ուլ) վերաբերյալ ուշագրավ տվյալներ են պարունակում: Այս բնույթի վավերագրերը իրենց հարուստ բովանդակությամբ, որոշակի գիտական հետաքրքրություն են ներկայացնում նաև Վասպուրականի հիշյալ և այլ գավառների և նրանց, մեծ մասամբ հայկական անուններով պահպանված, հարյուրավոր գյուղերի տեղագրական ուսումնասիրության տեսակետից: Վանի մերձակա Շուշանց, Ավանց, Արճակ, Խառակոնիս, Ղալաշուկ (Լեսկ) և այլ գյուղերից բացի հիշատակված են նաև վերոհիշյալ նահիաների Միրաբ, Այանս, Բերդիկ, Կղզի, Անկշտան, Սբուրթան (Սուրբ Վարդան), Նորավանց, Զըվըն, Դոնաշեն, Փակիս, Դանբաթ, Գոմս, Սոսրաթ, Քյոշք, Իսբելե (Ախավանք), Իշխանի գոմ, Քարվանց, Շխենի, Արտավեղ, Թիմար, Խիարթան, Զուլալ, Խորավել, Անար, Մճառիզ, Փշրավանք և բազմաթիվ այլ գյուղեր:

Գյուղերի (կարիյյա), ագարակների (մագրաա) և այնտեղ բնակվող ռայաթների վերաբերյալ վիճակագրական ուշագրավ տվյալներ կան մերթընդմերթ անցկացվող ընդհանուր գրանցումների (թահիր) և ստուգումների (յոքլամա) ժամանակ կազմված մեծ և փոքր ցուցակներում ու զեկուցագրերում: Այսպես, օրինակ, XVII դ. 80-ական թվականների նման մի ցուցակում հանրագումարի են բերված 631500 մուլքեր և հողեր և 196784 ռայաթներ⁹:

Վանի ֆոնդում առկա են արքունի խասերի (խավասս-ի հումայուն), զիամեթների ու թիմարների, բերդի գանձատան ելքի ու մուտքի և զինվորականության ոռոգիկների (իրադ վե մեսարիֆ, թա՛լինաթ-ի ասաքիր), բանակի կարիքների համար բնակչությունից գանձված կամ գնված մթերքների և այլ նյութերի (զախաիր), գլխահարկի (շիզյա) և նահիաների, գյուղերի, ագարակների և այլ եկամտաբեր վայրերի ու հաստատությունների վարձակալման գումարների (մուկաթիաթ) զեֆթերներ: Մեծ թիվ են կազմում հատկապես թիմարներին վերաբերող համառոտ և ընդարձակ ցուցակներն ու այլ պաշտոնական փաստաթղթերը¹⁰:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև ֆոնդում գրանցված մյուս բազմաբովանդակ տարարնույթ գրությունները (բողոքներ, զեկուցագրեր, վիճարանական գրություններ, ստուգումների արձանագրություններ, հրահանգներ,

բայրների միջև սպանությունների դրդող թշնամություն է եղել, որի ընթացքում, ամենայն հավանականությամբ, հոր հետ սպանվել է նաև մյուս որդին՝ Շամս-էղ-զինը: Քանի որ իր պատմության վերջում Շարաֆ-խանը նշում է, որ թեև 1578 թվականից նա տիրում էր իր ժառանգական տիրույթներին, սակայն, հավանաբար զբաղված լինելով իր երկի շարագրությամբ, կառավարչական գործերը թողել էր ավագ որդուն՝ Շամս-էղ-զինին (Շարաֆնամե, հ. Ա, էջ 456): Թվում է, թե Խալաֆ-խանի սպանությունից հետո, երբ կրկին տիրույթները տրվել են Շարաֆ-խանի ուղիղ գծով ժառանգներին, պետք է իշխեր ավագ որդին, որը փաստորեն իշխում էր զեռ հոր կենդանության օրոք:

⁸ ԿՄԺԳԱ, ֆոնդ 0245:

⁹ Նույն տեղում, ֆոնդ 233 Ա, վավ. 74:

¹⁰ Նույն տեղում, վավ. 313—447:

վճռագրեր և այլն), որոնց համակողմանի համեմատական ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ավելի ճշգրիտ պատկերացում կազմելու ինչպես սոցիալ-տնտեսական կյանքի առանձնահատկությունների, այնպես նաև պետական, զինվորական, վարչական ու ֆինանսական համակարգի վերաբերյալ:

Պետք է ասել, որ XVIII—XIX դդ. վավերագրերը ավելի մեծ թիվ են կազմում, հարուստ են բովանդակությամբ և մեզ են հասել առավել անվնաս վիճակում: Դրանք մեծ մասամբ վերաբերում են խաս, միրի և մալիքանե հողերի եկամուտների մուկաթիաներին, այդ վայրերի բնակիչներից ստացվող հարկերի ու տուրքերի գանձման իրավունքի աճուրդով վարձակալման կամ իլթիզամով տիրելու համակարգին: Ուշագրավ մանրամասնություններ են պարունակում հատկապես Մոկսին, Սղերգին, Խիզանին, Սպարկերտին, Հաքքարիի շրջանում՝ Աղբակին, Շամդինանին, Զուլամերիկին, Գավառին և Կոթուրին, Ադիլչավաղի յուրթլըքներին և օջաքլըքներին, Բերկրիի գյուղերին, ինչպես նաև Վանի սանջաքի զինապարտության տուրքերին (բեդել ասկարի) վերաբերող վավերագրերը, որոնց մեջ արտացոլված է XVIII դ. երկրորդ կեսում և XIX դարում Օսմանյան կայսրության այս ծայրամասի տնտեսական անկումը, պաշտոնեության և մուլթեգիմների հարստահարություններին ու քրդական աշիրեթների կողոպտիչ արշավանքներին ենթակա բնակչության աշխատավորական զանգվածների ծանր վիճակը: Առավել բնորոշ են այն վավերագրերը, որոնք վերաբերում են հողատիրության տարբեր ձևերին կամ վկայում են տեղական իշխանությունների ղեկուցադրերի հիման վրա սուլթանական հրամանով հողերի սեփականատիրական կատեգորիաների փոփոխման մասին: Այս կարգի վավերագրերի, որպես բացառիկ արժեք ներկայացնող պատմական սկզբնաղբյուրների մասին գաղափար կազմելու համար բավական է ծանոթանալ Վանի սանջաքին և Բերկրիի, Ոստանի ու Գավաշի նահիաներին վերաբերող, հիշք. 1201 (1786) թ. բովանդակալից մի վավերագրի հետ, որը թեև ծավալով մեծ չէ, սակայն Օսմանյան կայսրության ավատատիրական համակարգի, պետական (խաս և միրի) և մասնատիրական (մալիքանե) հողատիրության և մանր ու խոշոր ավատատերերի հարստահարության ներքո հեծող ուսյաթների ծանր վիճակի վերաբերյալ ուշագրավ տվյալներ է պարունակում:

Վանի մուհաֆիզ Թեյմուր փաշան վերոհիշյալ թվականին Բարձրագույն դռանը ներկայացրած ղեկուցադրերից մեկում տեղեկացնում է, որ հիշքեթի 1187 (1773) թվականից ի վեր Վանի մուհաֆիզներին որպես ոտճիկ նշանակված որոշ խասեր ինչ-որ ձևով մալիքանե են արձանագրվել, որի հետևանքով մուհաֆիզության հասույթները պակասել են: Միաժամանակ մյուս խասերի ուսյաթների վրա լրացուցիչ պարտականություններ են դրվել, որոնք նրանք ի վիճակի չեն հատուցելու, և այս պարագան կարող է պատճառ դառնալ ուսյաթների ցրվելուն: Ուստի, վկայակոչելով Վանի կազիի և ժողովրդի անունից ներկայացված գրությունը (թահրիր), խնդրում է կարգադրել, որպեսզի մալիքանե դարձված գյուղերը վերստին վերականգնվեն որպես խասեր և դրվեն միրմիրանի (բեյլարբեյության) տրամադրության տակ: Զեկուցադրին առնթեր տրված է Վանի միրմիրանին ենթակա Զրվանդանց, Կղզի, Աթանանց և Գավաշ գյուղերի և Բենդ-ի մահի (ձկան ամբարտակ) կոչվող ձկնորսարանի, ինչպես նաև տեղի զինվորականության օջաքլըքների մեջ մտնող Օսման-բեկի ազարակի մուկաթիաների գումարներն ու դրանց վրա բերաթ ստացողների անունները:

Վավերագրի առաջին էջի վրա Քեյմուր փաշայի ղեկուցագրի բաղվածքն է և նշված վայրերի վերաբերյալ տրված տեղեկանքները: Երկրորդ էջի վերի աջ անկյունում գրանցված հարց ու պատասխանից պարզվում է, որ կատարված կարգադրությանը նախորդել է, որոշ բնություն պարզելու համար, թե նման այլ դեպքեր կղե՞լ են արդյոք: Թեև պարզ չէ, թե հարցն ում է ուղղված, սակայն պետք է ենթադրել, որ բացատրություն տվողը, հարցին լավատեղյակ, պատասխանատու պաշտոն զբաղեցնող անձնավորություն է եղել, որը պատասխանելով Բարձրագույն դռան հարցումին, նշել է, որ վանի միրմիրանին պատկանող խասերը թեև ժամանակին մուհաֆիզների տնօրինությամբ տրվել են մասնավոր անձանց որպես մալիքանե, սակայն, որքանով որ մասնատիրական (մալիքանե) հողերի վերստին խաս կամ միրի դարձնելը հակասում է մալիքանեի օրենքներին, ուստի այդ կարող է տեղի ունենալ միայն սուլթանական հրամանագրով: Այս բացատրագրի հիման վրա էլ վավերագրի առաջին էջի կենտրոնական մասում, դիվանի խոշոր գրություն, կարգադրված է նշված մուկաթիաների եկամուտները նորից վերականգնել որպես անմիջապես միրիին, կոնկրետ դեպքում վանի միրմիրանին պատկանող եկամուտներ:

Ինչպես տեսանք, XVIII դ. հողատիրության առանձնակի մի հարցի վերաբերելով հանդերձ, վավերագիրը պարունակում է տարբեր պաշտոնատար անձանց տարաբնույթ ղեկուցագրեր, տեղեկանքներ և մակագրություններ, և այդ առումով էլ առավել բնորոշ մի օրինակ հանդիսանալով, ըստ ամենայնի բացահայտում է վավերագրերի այս խմբի, որպես որոշակի գիտական հետաքրքրություն ներկայացնող պատմական սկզբնաղբյուրների, ընդհանուր պատկերը:

Ստորև հրապարակելով վավերագրի բնագրի նմանահանությունը, վերծանությունն ու հայերեն թարգմանությունը, կարծում ենք, որ այն, վերը մասնակիորեն գնահատված փաստական նյութով, կարող է որոշակի գիտական ուշադրության արժանանալ ավելի լայն գիտական շրջանակների կողմից: Ինչպես տեղ գտած սոցիալ-տնտեսական, վարչական և այլ տերմինները, բավարար չափով հետազոտված և մեկնաբանված են մասնագիտական գրականության մեջ:

Ներկայումս վանի մուհաֆիզ, մեծարգո վեզիր, նորին վսեմություն, գեեբջանիկ Քեյմուր փաշայից ստացված գուրբյան մեկ հոգվածի համառոտ շարադրանքն է:

1201 թ. սաֆարի 13-ին (1786 թ. դեկտ. 5):

Թեև հնուց ի վեր վանի մուհաֆիզներին որպես ապրուստի միջոց և ոռճիկ նշանակված խասերն ու այլ եկամուտները ավելի քան 25000 դուրուշ է եղել, սակայն 1187 թվականից ի վեր, հիշյալ խասերից որոշ գյուղեր, ինչ-որ ձևով մալիքանե են արձանագրված, որի պատճառով վիլայեթի հասույթները նվազել ու պակասել են: Բացի այդ, հիշյալ խասերից, այն գյուղերի ռայաթներին, որոնք մալիքանե չեն արձանագրված, սովորական ձևով պարտադրվել են սե-

րայի (պալատական), ինչպես նաև վառելափայտի և այլ սովորութային ծախսերը, որոնք, ինչպես ղեկուցված է, ռայաթները ի վիճակի շեն հատուցելու, և բանի որ պարզվում է, որ այս վիճակը շարունակվելու դեպքում, նշված ռայաթները թշվառության կմատնվեն և կցրվեն, ուստի պետք է վերոհիշյալ խասերի այն գյուղերը, որոնք մալիքանե են արձանագրված, վերցվեն և ինչպես առաջ էր, նորից խաս արձանագրվելով միացվեն միրմիրանին: Վանի կազին և ժողովուրդը իրենց գրությամբ խնդրում են, գերագույն հրամանի հրապարակումով և շնորհումով, պահպանության տակ վերցնել վերոգրյալ ռայաթ-ծառաներին և թույլ շտալ, որ նրանք թշվառության մատնվեն ու ցրվեն:

Վանի միրմիրանին ենթակա

Վանին ենթակա Զրվանդանց գյուղը 1189 թ. գանձատուն
ուղարկվող, տարեկան՝ 1000 ղուրուշ

Վալիի խասի համար՝ 45 »

Մուհամադ-Սադիդ էֆենդիի անունով, 1197 թ. շավալի 29-ին
բերաթներ են տրված, կանխիկ, առձեռն՝ 50 »

Հիշյալ գյուղը Վանի միրմիրանի խասերից լինելով, ամեն տարի մի մուլթագիմի էր տրվում, իսկ մուլթագիմները, անձնական շահերից զրդված, իրենց ռայաթների նկատմամբ ոտնձգություններ են թույլ տալիս և պատճառ դառնում մյուս միրմիրաններից ստացվող եկամուտների նվազելուն, որի համար էլ Վանի մուհաֆիզ Ահմադ փաշայի ներկայացմամբ, հիշյալ թվականին վաճառված է որպես մալիքանե:

Չկան ամբարտակի (բանդ-ի մահի) մուկաթիան, որը այսքան
մալիքանեի հարկով (մալով) Վանի մուհաֆիզ Ահմադ փաշայի խնդրի հիման վրա վաճառվել է 1189 թվականին: Տարեկան՝ 200 ղուրուշ

Գարվիշ սեյիդ-Մուհամադի, Մահմուդի և սեյիդ Ֆեյզուլլահի
անուններով բերաթներ են տրված 1194 թ. շավալի 21-ին.
կանխիկ առձեռն՝ 100 »

Տարիներ շարունակ որսավայր հանդիսացող գետի նախկին հունից շեղվելու հետևանքով, ձկան որսը վերացել է, որից և նվազել են միրմիրանի եկամուտները, և Վանի մուհաֆիզ Ահմադ փաշայի ներկայացմամբ, վերոհիշյալ թվականին վերավաճառվել է:

Վանի էյալեթի Ոստանի նահիայի Կղզի գյուղը 1189 թ., վալիի
ներկայացմամբ, տարեկան՝ 50 ղուրուշ

Սեյիդ Մուլեյմանի անունով, որպես մալիքանե բերաթ է տրված, 1192 թ. սաֆարի 18-ին կանխիկ առձեռն՝ 50 »

Հիշյալ գյուղին որպես մակթու տիրող Մուհամադի մահանալու պատճառով, Վանի մուհաֆիզի ներկայացմամբ, վերոհիշյալ թվականին որպես մալիքանե վաճառվել է:

Վանի էյալեթի Ոստանի նահիայի Աթվանանց գյուղը 1189 թ.,
տարեկան՝ 80 ղուրուշ

Սեյիդ Մուլեյմանի անունով բերաթ է տրված, 1192 թ. սաֆարի
18-ին, կանխիկ առձեռն՝ 15 »

Մի բանի տարուց ի վեր ուսյաթների ցրված լինելու պատճառով, վերստին շենացնելու նպատակով, Վանի մուհաֆիզի ներկայացմամբ, հիշյալ թվականին վաճառվել է որպես մալիքանե:

Վանի էյալեթի Գավաշ նահիայի Գավաշ գյուղը, Վանի մուհաֆիզ Թեյմուր փաշայի ներկայացմամբ, 1191 թ. ըստ ներկայացման 28000 փարա (°). տարեկան՝ 50 դուրուշ

Աղաների աղա Մուհամադ-Ամինի անունով, որպես մալիքանե բերաթ է տրված. 1191 թ., կանխիկ առձեռն՝ 50 »

Հիշյալ գյուղը միրմիրանի խասերից լինելով, մուլթազիմների շահատակության, ընշաքաղցության և ոտնձգությունների պատճառով, ուսյաթները թրշվառության են մատնվել ու ցրվել. գյուղն ավերվել է, միրմիրանի եկամուտները նվազել են ու պակասել: Վանի մուհաֆիզ Թեյմուր փաշան, գյուղը վերստին որպես մալիքանե վաճառելու մասին գեկուցել է և նրա ներկայացմամբ, նշված թվականին, որպես մալիքանե, աճուրդով վաճառվել է:

Վանի զինվորականության օջափլբֆին ենթակա

Ֆրիզունի (°) կազային ենթակա Օսման բեկի ազարակի մուկաթիան. կես բաժնի մալը—տարեկան՝ 1000 դուրուշ

Հասանի որդի Աբդուլլայի անունով բերաթ է տրված. կես բաժնի դիմաց, կանխիկ առձեռն՝ 15 »

Հիշյալ գյուղի կես բաժնին մակթուի իրավունքով տիրող Հուսեյնի մահից հետո, այդ թափուր բաժինը, նշված թվականին, որպես մալիքանե, աճուրդով վաճառված է:

Ամեն տարվա մալը Վանի մուհաֆիզներին հատուցվող վերոհիշյալ վեց մակթուները, այս շափի ձևակերպումներով, մալիքանեի կարգով արձանագրված են վերոհիշյալ անձանց վրա: Հրամանը նորին սրբություն, վսեմաշուք սուլթանինն է:

1201 թ. սաֆարի 16-ին (1786 թ., դեկտ. 8):

— Այս ձևի ալլ օրինակներ կա՞ն:

— Այս ձևը, միրմիրանի խասերից լինելով, իրենց դիմումների համաձայն, շենացման պայմանով, որպես մալիքանե, շնորհված է ուսյաթներ խնամող որոշ մարդկանց, որից հետո, վերստին վերացնելու օրինակներ չլինելուց բացի, հիշյալ մուկաթիայի հինգ կտորը Վանի նախկին մուհաֆիզների և մեկ կտորը ներկայիս Վանի մուհաֆիզ, վերոհիշյալ վեզիրի ներկայացմամբ, շնորհված լինելով, վերստին վերացումը, մալիքանեի պայմաններին հակառակ լինելու պատճառով, այժմ դրա վերացումը հաքիմների ցանկությունից է կախված. հրամանը վսեմաշուք և ողորմած նորին սրբություն սուլթանինն է:

(Ստորագրություն)

Հիշյալ թվականից ի վեր, միրմիրանի խասերից, Վանի էյալեթում գտնվող գյուղերի մալիքանե տրված այն մուկաթիաների մալն ու մուամիլաները, որոնք գրանցված են իրենց լիազորների վրա և արձակելով նորից մալիքանե են տրված, թող վերականգնվեն որպես միրմիր:

(Ստորագրություն)

Երկու խնամքի և արձանի արձանագրութիւն


Երկու խնամքի և արձանի արձանագրութիւն
 Երկու խնամքի և արձանի արձանագրութիւն
 Երկու խնամքի և արձանի արձանագրութիւն

Ստեփան

Ստեփան Երկու խնամքի և արձանի արձանագրութիւն

Ստեփան Երկու խնամքի և արձանի արձանագրութիւն
 Ստեփան Երկու խնամքի և արձանի արձանագրութիւն
 Ստեփան Երկու խնամքի և արձանի արձանագրութիւն

Ստեփան Երկու խնամքի և արձանի արձանագրութիւն
 Ստեփան Երկու խնամքի և արձանի արձանագրութիւն
 Ստեփան Երկու խնամքի և արձանի արձանագրութիւն



حالا وان محافظی وزیر مکرم سعادتلو تيمورباشا حضرتلری طرفندن
وارد اولان تحريراتدن بر ماده نك خلاصه سیدر • فی ۱۳ ص سنه ۱۲۰۱

وان محافظلرینه از قدیم مدار و معاش تعیین اولنان خواص و
ما بر ابرادات اتحق یگر می بنی بیک غروشه بالغ اولورا یکن بیک یوز
سکان بدی تاربخندن برو خواص مرفوم قرالرنندن بعضیلری برو تعریب
مالکانه قید اولندیعبیه بناء حاصلات ولایة کسرو نقصان تر نب
ایلدگندن ما عدا خواص مذکور قرالرنندن مالکانه قید اولمیان قرال
رعایا لرینه معتاد اولان سرای مصارفی و حلب و سائر مصارفات عرفیه
طرح و تحمیل اولندقجه ادایه عديم الاقتدار اولدقلرینی بیان و بو
صورتده فالورایسه رعایای مذکوره بر اکنده و پریشان اولدجقلر ظاهر
اولمقله خواص مرفومه دن مالکانه قید اولنلر رفع و ینه قدیمی اوزره
خاص قید اولنوب کما فی الاول خواص میر میرانه الحاق و اقتضا ایدن امر
عالی اصدار و عنایت و بو وجهله رعایای مرفومه قوللری پریشانیتدن
صیانت بیورلمسی مشارالیه وان قاضیسی و اهالیسی تحریر ایدرلر •

تابع خواص میر میران وان

قریه زیر و اندانیس تابع وان در سنه ۱۱۸۹

فی ارساله خزینه فی سنه ۱۰۰۰ غروش

برای خاص والی فی سنه ۴۵ غروش

بنام محمد صادق افندی بروات داده فی ۲۹ ل سنه ۱۹۲

معجله ۵۰ غروش

قریه مزبور میر میران وان خواصندن اولوب بهر سنه سر ملتزمه

ورلمک تقریبیله ملتزملر کفدو نفعلری سوداسیله رعایا سنه تعدی

ایلدکلرندن باشقه میرمیران اولنلرک ایرادی کسریته باعث اولمقله
 وان محافظی احمدباشانک عرضی موجبجه تاریخ مزبورده مالکانه
 فروخت اولنمشدر .

مقاطعه بند ماهی که با این قدر مال مالکانه فروخت شده با
 عرض احمدباشا محافظ وان در سنه ۱۱۸۹

فی سنه ۲۰۰ غروش

بنام درویشسید محمد و محمود و سید فیص الله بروات داده

فی ۲۱ ل سنه ۱۹۴

معجله ۱۰۰ غروش

بر قاج سندهن سرو مستمراً صید اولنان نهری میرای قدیمندن
 انحراف و شکار ماهی اولمدیقندن ایراد میرمیران کسرجاری اولمقله
 وان محافظی احمد باشانک عرضی موجبجه تاریخ مزبورده مجدداً فروخت
 اولنمشدر .

قریه کغزی در ناحیه واسطان در ایالت وان سنه ۱۸۹

با عرض والی فی سنه ۵۰ غروش

بنام سید سلیمان بروجیه مالکانه برات داده فی ص سنه ۱۱۹۲

معجله ۱۵ غروش

قریه مزبوره بروجیه مقطوع متصرف اولان محمد فوت اولمقله وان
 محافظی عرضی موجبجه بالمزایده تاریخ مزبورده مالکانه فروخت
 اولنمشدر .

قریه اتکنانس در ناحیه واسطان در ایالت وان در سنه ۱۱۸۹

فی سنه ۸۰ غروش

بنام سید سلیمان بروجیه مالکانه برات داده فی ۱۸ ص سنه ۱۱۹۲

معجله ۱۵ غروش

قریه مزبورك برقاچ سنه دن برو رعایاسی پراکنده و پریشان
اولمقدن شن و آبادان اولمقلفه وان محافظی عرضی موجبنه تاریخ
مزبوره ده مالکانه فروخت اولمشندر .

قریه کواش تابع تاحیه کواش در ایالت وان پرموچپ عرض تیمور
پاشا محافظ وان در سنه ۱۱۹۱

بر موجب عرض ۲۸۰۰۰ ناروب

فی سنه ۵۰ غروش

بنام محمد امین اغا، اغایان وان پروچه مالکانه پرات داده فی

سنه ۱۱۹۱

معجله ۵۰ غروش

قریه مزبوره خواص میر میرا، تدن اولوی ملتوملری تفعلربجون
اکالیق و تعدیا تلرتدن ناشی رعایا پراکنده و پریشان وقریه مزبوره
اولندیغندن ایراد میر میران کسر و نقصان جاری اولمقله مرقوم مجدداً
مالکانه فروخت اولمشنی وان محافظی تیمور پاشا عرض اتمکله عرضی
موجبنه بالمتزایده تاریخ مزبوره ده مالکانه فروخت اولمشندر .

تابع اوچقلق تفرات وان

مقاطعه مزرعه عثمان یک تابع قضاء قریدون

مال نصف حصه فی سنه ۱۰۰۰ غروش

بنام عبدالله بن حسن پروچه مالکانه پرات داده

نصف حصه معجله ۱۵ غروش

قریه مزبورك نصف حصه سنه پروچه مقطوع متصرف اولان حسین

فوت اولمنله حصه بی محلولندن بالمزایده بروجہ مالکانہ تاریخ
مزبورہ ده مالکانہ فروخت اولنمشد .

بهر سنہ مالترین وان محافظترینہ وریک التي مقطوعات مزبورہ
بو مقدار معاملات ایله مرقومونک بروجہ مالکانہ عہدہ لرنده اولدی
مقیدر - فرمان دولتلو سلطانم حضرتلرینگدر . فی ۱۶ ص سنہ ۱۲۰۱

- بو مقوله نک امثالی وارمیدر دیه .

- بو مقوله میرمیران خواصندن اولوب کندو عرضلری موجبہ سنو
آبادان ایتمک شرطیله بعض رعایا پرور کسنه به عمار شرطیله بروجہ
مالکانہ توجیه اولتدقدن صگره تکرار رفع اولندیقک امثالی بولنمه
دیقندن باشقه مقاطعه مزبورک بش قطعہ سی سابق وان محافظلری عرضی
و بر قطعہ سی حالا وان محافظی وزیر مشارالیه نک عرضی موجبہ توجیه
اولنمرا اولمنله تکرار رفعی شروط مالکانه به مخالف گورنمکله الحال
هذه رفعی اراده حکامه منوطدر - فرمان دولتلو عنایتلو سلطانم حضر
تلیرینگدر . فی ۲۰ ص سنہ ۱۲۰۱ (امضاء)

تاریخ مذکوردن برو خواص میرمیران اولوب وان ایالتنده واقع
قرالرن مالکانہ وریلان مقاطعات مالی و معاملہ لری وکیللرک اوزرینه
ایلدگی وینه عتقنه مبنی مالکانہ ورلمش اولندیغی میری وقرار
اولنه .
صح

А. Д. ПАПАЗЯН

ОСМАНСКИЕ АРХИВНЫЕ ДОКУМЕНТЫ НАРОДНОЙ
БИБЛИОТЕКИ КИРИЛЛА И МЕФОДИЯ В СОФИИ,
ОТНОСЯЩИЕСЯ К ВАНСКОМУ ЭАЛЕТУ

Резюме

В отдельном фонде Восточного архивного отдела Народной библиотеки Кирилла и Мефодия в Софии хранятся 927 документов, относящихся к Ванскому эалету Османской империи XVI—XIX вв., которые имеют значение важнейших первоисточников, освещающие социально-экономическую и политическую историю упомянутых веков.

Предварительное изучение документов показало, что среди них находятся большие и малые дефтеры знаметов и тимаров XVI—XVII вв., росписи прихода и расхода гарнизона Ванской крепости (ирад ве месариф), перечни воинских жалований (та'йиннат-и асакир), документы о купле или изъятии у местного населения продовольствия и других продуктов на нужды армии (захаир). Кроме того, здесь находятся и списки поголовной подати (джизия), тексты контрактов об аренде доходов или предоставления во владение сел, хуторов (мазра'а) и других прибыльных мест и учреждений с илтизамом, а также другие документы, всестороннее изучение которых в большей степени будет способствовать освещению основных вопросов, связанных как с социально-экономической и политической историей Васпуракана в упомянутое время, так и с проблемами топографии и демографии этого региона.

В качестве примера, заслуживающего внимания, нами издается прочтение турецкого текста документа от 1201 г. х. (1786 г. н. э.) вместе с переводом его на армянский язык. Этот документ содержит разрешение султана, данного в ответ на докладную ванского Теймур паши о преобразовании ранее переведенных из категории «хасс» в «маликане», сумм «мукат'а», сел Зрванданц, Кхзи, Атананц и Гаваш, рыбных угодий Бенд-и махи, находящихся в ведении мирмираана эалета (бейлербея), а также входящего в местный военный оджаклык хутора Османбека из категории «маликане» с переводом их снова во владение «мири».

H. D. PAPAZIAN

LES DOCUMENTS D'ARCHIVES OTTOMANS CONCERNANT
L'EALET DE VAN DE LA BIBLIOTHEQUE CYRILLE ET METHODE
DE SOFIA

Résumé

Le fonds privé des Archives orientales de la Bibliothèque Cyrille et Méthode de Sofia conserve 927 documents des XVIe-XIXe siècles concernant l'éalet de Van de l'Empire Ottoman, documents qui présen-

tent l'importance de sources précieuses éclairant l'histoire sociale, économique et politique des siècles mentionnés.

L'étude préalable de ces documents montre qu'on y découvre des deffers grands et petits des ziamets et des timars des XVIe-XVIIe siècles, l'enregistrement des recettes et dépenses de la garnison de la forteresse de Van (irad ve messarif), l'énumération des soldes militaires (ta'yinat-i assakir), des documents relatifs à l'achat ou la confiscation de chez la population locale de vivres et d'autres marchandises pour les besoins de l'armée (zakhaïr). En, outre, on y trouve aussi les listes de la capitation (djizia), les textes des contrats de location de revenus ou de dons en propriété de villages, de métairies (mazra'a) et d'autres endroits et exploitations à revenus avec iltizam, de même que d'autres documents dont l'étude approfondie contribuera dans une grande mesure à l'éclaircissement des questions essentielles concernant l'histoire sociale, économique et politique du Vaspourakan à l'époque mentionnée, ainsi que les problèmes de la topographie et de la démographie de cette région.

En guise d'exemple, nous publions le texte turc d'un document de l'an 1201 du Hégire (1786) avec sa traduction en arménien. Ce document contient la permission du sultan, donnée en réponse au rapport de Telmour pacha de Van, pour la réforme des sommes "moukat'a", auparavant transférées de la catégorie "Khas" à la catégorie "malikané", des villages de Zrvandantz, Keghzi, Atanantz et Gavach, des exploitations poissonnières Bend-i mahi, qui se trouvaient sous la juridiction du mirmiran de l'ealet (beylerbey), ainsi que pour transférer la métairie d'Osman-bey, faisant partie de l'odjaklyk militaire local, de la catégorie "malikané" sous la juridiction "miri".